

2012 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 17-ԻՆ ԺԱՄԸ 14:00-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ՝ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ
ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱԶԱԿՑՈՂ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

քաղ. Երևան
Մասնակցում էին՝

Ա. Ղարիբյան	ՀՀ Նախագահի գլխավոր խորհրդական, Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի փոխնախագահ
Կ. Հարությունյան	ՀՀ կրթության և գիտության նախարարի տեղակալ
Ա. Ալեքսանյան	ՀՀ տրանսպորտի և կապի նախարարի տեղակալ
Ռ. Հարությունյան	«Զարգացման հայկական գործակալություն» ՓԲԸ-ի գլխավոր տնօրեն
Յու. Շուքուրյան	ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի փոխնախագահ, ակադեմիկոս
Հ. Մուսայելյան	«Մինոփսիս Արմենիա» ըկերության գլխավոր տնօրեն
Բ. Ենգիբարյան	«Ձեռնարկությունների ինկուբատոր» հիմնադրամի տնօրեն
Գ. Կարապետյան	«Տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոն» ՍՊԸ-ի նախագահ
Հ. Ֆարամազյան	«Ջի Էն Սի-Այֆա» ՓԲԸ-ի գլխավոր տնօրեն
Ա. Սալաթյան	«Նեյշնլ ինաթրումենթս» ընկերության հայաստանյան մասնաճյուղի տնօրեն
Մ. Մարկոսյան	«Երևանի կապի միջոցների ԳՀԻ» ՓԲԸ-ի խորհրդի նախագահ
Ռ. Աղզաշյան	ՀՊՃՀ-ի պրոռեկտոր
Գ. Խաչատրյան	«Սմարտ-Տեխ» ՍՊԸ-ի գլխավոր տնօրեն
Ա. Կարապետյան	«Սոֆթլայն Ինթերնեյշնլ Արմենիա» ընկերության տնօրեն

Ա. Գրիգորյան Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի քարտուղար

Հրավիրվածներ`

Վ. Գաբրիելյան ՀՀ ֆինանսների նախարար

Տ. Դավթյան ՀՀ էկոնոմիկայի նախարար

Դ. Սարգսյան ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար

Վ. Դանիելյան ՀՀ էկոնոմիկայի նախարարի խորհրդական

Լ. Հունանյան ՀՀ կառավարության աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական վարչության պետ

Մ. Փաշայան ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի աշխատակազմի ՏՏ վարչության պետ

Կ. Բեգլարյան ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հարկ վճարողների սպասարկման և հարկման ընթացակարգերի վարչության պետ

Ա. Հարությունյան ՀՀ կառավարության աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական վարչության առաջատար մասնագետ

Հ. Խանջյան «Բի Լայն» ՍՊԸ-ի նախագահ

Հ. Ավոյան «Սոքսիո» ՓԲԸ-ի տնօրեն

Հ. Չոբանյան «Նորք» տեղեկատվավերլուծական կենտրոն» ՓԲԸ-ի տնօրեն

Վ. Մասարաջյան «Վիասֆեր Տեխնոպարկ» ՓԲԸ-ի գլխավոր տնօրեն

Վ. Հովհաննիսյան «Օրանժ Արմենիա» ծրագրի կոորդինատոր

Է. Մանուկյան «Իսմա» ՍՊԸ-ի տնօրեն

Ա. Սահակյան «Ինֆորմացիոն տեխնոլոգիաների ձեռնարկությունների միություն» ԻԱՄ-ի իրավաբան

1. Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի նախարդ նիստի հանձնարարականների կատարման ընթացքի մասին

(Ա. Գրիգորյան, Վ. Դանիելյան, Յու. Շուքուրյան, Հ. Խանջյան, Տ. Սարգսյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝ հանձնարարել ՀՀ էկոնոմիկայի նախարար Տ. Դավթյանին՝

1) ՀՀ ֆինանսների նախարար Վ. Գաբրիելյանին, Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի քարտուղար Ա. Գրիգորյանին և «Ձեռնարկությունների ինկուբատոր» հիմնադրամի տնօրեն Բ. Ենգիբարյանին՝ երկշաբաթյա ժամկետում քննարկել ՀՀ-ում գործող ՏՏ ընկերությունների կողմից արտերկրում վերապատրաստման սահմանված թույլատրելի նորմերի վերանայման հարցը և արդյունքները զեկուցել հաջորդ նիստին.

2) Թվային ժառանգության պահպանման քաղաքականության և ռազմավարության մշակման նպատակով ձևավորել աշխատանքային խումբ՝ աշխատանքային խմբում ներգրավել նաև ՀՀ արտաքին գործերի նախարարության և ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի ներկայացուցիչներին.

3) աշխատանքային խմբում քննարկել ու բացահայտել առկա խնդիրները՝ և պաշտոնապես դիմել ՅՈՒՆԵՍԿՕ՝ ՀՀ-ի համար Թվային ժառանգության պահպանման քաղաքականության և ռազմավարության մշակման միջոցառումների մասով միջոցառումների առաջնահերթությունները սահմանելու համար.

4) միջազգային փորձի վերլուծության արդյունքների, ՅՈՒՆԵՍԿՕ-ից ստացված պատասխանի հիման վրա Թվային ժառանգության պահպանման քաղաքականության և ռազմավարության մշակման հետ կապված հարցերը քննության առնել ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանի մոտ.

5) քննարկել Վիկիպեդիայում հայերեն բովանդակության զարգացման և տարածման համար տեղեկատվության հասանելիության, Վիկի նախագծերի ու տեխնոլոգիաների ներդրման և զարգացման քաղաքականության մշակման հարցի մասով ներկայացված խնդիրները և հաջորդ նիստին ներկայացնել առաջարկություն:

2. Հեռահաղորդակցության ոլորտում առկա խնդիրների և լուծումների մասին

(Վ. Հովհաննիսյան, Վ. Դանիելյան, Տ. Սարգսյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝

1) առաջարկել ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի նախագահ Ռ. Նազարյանին մեկշաբաթյա ժամկետում՝

ա. քննարկել ազատ թողունակությունների վարձակալությամբ տրամադրելու գործընթացի նկատմամբ ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից վերահսկողություն իրականացնելու նպատակահարմարության հարցը և ըստ անհրաժեշտության ներկայացնել գրավոր եզրակացություն,

բ. քննարկել և ներկայացնել գրավոր եզրակացություն՝ ՀՀ օրենսդրությամբ պատասխանատվության միջոցների սահմանման հարցի վերաբերյալ, այն դեպքերի համար, երբ ազատ թողունակություններ ունեցող օպերատորը, որը ներկայացրել է իր ենթակառուցվածքի զարգացման եռամյա ծրագիրը, մերժել է այլ օպերատորներին վարձակալությամբ դրանք տրամադրելու խնդրանքը,

գ. քննարկել պետության կողմից թափանցիկ և ազատ մրցակցության ապահովման հետ կապված այն հարցերը, որոնք կնպաստեն նոր օպերատորների տեղական շուկա մուտք գործելուն, առողջ մրցակցության զարգացմանը և ըստ այդմ ներկայացնել գրավոր եզրակացություն,

դ. ուսումնասիրել և քննարկել ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից երկրի հեռահաղորդակցության շուկայի շահերից բխող (հեռախոսահամարների տեղափոխելիության մասով) որոշում կայացնելու նպատակահարմարության հարցը և ըստ այդմ ներկայացնել գրավոր եզրակացություն.

2) հանձնարարել ՀՀ էկոնոմիկայի նախարար խորհրդական Վ. Դանիելյանին՝ աշխատանքային խմբում քննարկել և ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից ներկայացվելիք գրավոր եզրակացությունների հիման վրա արդիականացնել ՀՀ կառավարության 2007 թվականին հաստատված Տեղեկատվական և հեռահաղորդակցական տեխնոլոգիաների զարգացման ռազմավարությունն ու 2010 թվականին հաստատված էլեկտրոնային հասարակության զարգացման ճանապարհային քարտեզը՝ դրանցից առանձնացնելով դեռևս լուծում չստացած խնդիրները, ինչպես նաև ներառել նոր խնդիրները.

3) հանձնարարել ՀՀ տրանսպորտի և կապի նախարար Մ. Վարդանյանին, ՀՀ էկոնոմիկայի նախարար Տ. Դավթյանին և ՀՀ քաղաքաշինության նախարար Վ. Վարդանյանին համատեղ քննարկել մայրուղիներին կից և նոր կառուցվող շենք-շինություններում հեռահաղորդակցության ենթակառուցվածքների պարտադիր

նախատեսման հարցը և ըստ այդմ մշակել նորմեր կամ օրենսդրական փաթեթ, որոնք շինարարական աշխատանքներ իրականացնելիս հեռահաղորդակցության ենթակառուցվածքների կառուցումը կդարձնեն պարտադիր պահանջ:

3. Պետական գնումների և մրցույթների /տենդերներ/ ոլորտում առկա խնդիրների մասին

(Ա. Սահակյան, Վ. Գաբրիելյան, Կ. Հարությունյան, Տ. Սարգսյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝

1) առաջարկել «Ինֆորմացիոն տեխնոլոգիաների ձեռնարկությունների միություն» ԻԱՄ-ի գործադիր տնօրեն Կ. Վարդանյանին՝

ա. հստակեցնել ընկերությունների դասակարգման բացակայությունը պետական գնումների գործընթացի մասով ներկայացված առաջարկությունը,

բ. պետության կողմից մրցույթներն անհարկի ձգձգելու և չեղյալ հայտարարելու կապակցությամբ ներկայացնել կոնկրետ դեպքեր.

2) հանձնարարել ՀՀ ֆինանսների նախարար Վ. Գաբրիելյանին՝

ա. հայտարարվող մրցույթների մասին մեկ աղբյուրից տեղեկանալու նպատակով դորնոր կազմակերպությունների (ԱԶԲ, ԵԻԲ և այլն) վարկային ու դրամաշնորհային միջոցներով իրականացվող ծրագրերի շրջանակներում հայտարարվող մրցութային հայտարարությունները տեղադրել www.gnumner.am կայքում,

բ. իր իսկ առաջարկությանը համապատասխան՝ մշակել և հաջորդ նիստի քննարկմանը ներկայացնել տեխնիկական առաջադրանքի մշակման գործընթացում փորձագետների ներգրավման կարգ,

գ. հայտարարվող մրցույթների ժամանակ որոշ ոչ անհրաժեշտ փաստաթղթերի պահանջի մասով քննարկել մրցույթներ հայտարարելիս մրցութային պայմաններում բացառել անհարկի փաստաթղթեր ներկայացնելու պահանջը և սահմանվելիք փաստաթղթերի այն ցանկը, որոնք ըստ էության կնկարագրեն ձեռք բերվող ապրանքները կամ ծառայությունները, ինչպես նաև հաշվի առնել ՀԲ-ի համանման փորձը,

դ. պետական գնումների բողոքարկման խորհրդի կազմում ընդգրկել այնպիսի նեղ մասնագետների որոնք կտիրապետեն ինչպես տվյալ մասնագիտությանը, այնպես էլ գնումների գործընթացի օրենսդրությանը,

ե. մրցույթները հայտարարելուց առաջ ճիշտ գնահատել ձեռք բերվող սպրանքների կամ ծառայությունների էությունը և մրցույթային պայմաններում նախատեսել ողջամիտ ժամկետներ.

3) հանձնարարել SS ՋԱԽ-ի անդամներին՝ տեխնիկական առաջադրանքի մշակման գործընթացում փորձագետների ներգրավման նպատակով ներկայացնել փորձագետների թեկնածություններ:

4. Էլեկտրոնային առևտրի զարգացման նպատակով ՀՀ կառավարության կողմից տրված հանձնարարականների կատարման մասին

(Ա. Սահակյան, Տ. Սարգսյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝ էլեկտրոնային առևտրի հետ կապված հարցերը դարձնել առանձին քննարկման առարկա և այն քննության առնել ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանի մոտ:

5. Բուհերում ուսումնական գործընթացները նորագույն ծրագրային միջոցներով զինելու մասին

(Է. Մանուկյան, Կ. Հարությունյան, Տ. Սարգսյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝ հանձնարարել ՀՀ կրթության և գիտության նախարար Ա. Աշոտյանին՝ ԵՊՃՀ-ի համապատասխան մասնագետների հետ համատեղ քննարկել բուհերում ուսումնական գործընթացները նորագույն ծրագրային միջոցներով զինելու հետ կապված հարցերը, ամփոփել աշխատանքային խմբի արդյունքները և ըստ այդմ ներկայացնել:

6. Համակարգչային հայատառ ստեղնաշարերի մասին

(Բ. Ենգիբարյան, Տ. Սարգսյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝ ընդունել ի գիտություն զեկուցեց «Ձեռնարկությունների ինկուբատոր» հիմնադրամի տնօրեն Բ. Ենգիբարյանի զեկուցումը՝ Համակարգչային հայատառ ստեղնաշարերի մասին:

- 7. Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության միջև կրկնակի հարկումը բացառելու մասին

(Հ. Չոբանյան, Մ. Փաշայան, Տ. Մարգարյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝ ընդունել ի գիտություն ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի աշխատակազմի ՏՏ վարչության պետ Մ. Փաշայանի հաղորդումը:

- 8. 2012 թվականին նախատեսվող ՏՀՏ միջոցառումների ցանկի ներկայացում և առաջարկությունների քննարկում

(Հ. Չոբանյան, Տ. Մարգարյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝ հաստատել 2012 թվականին նախատեսվող ՏՀՏ միջոցառումների ցանկը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՎԱՐՉԱՊԵՏ

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԶԱՐԳԱՅՄԱՆՆ

ԱԶԱԿՑՈՂ ԽՈՐՀՐԴԻ ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ

ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ